Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղ, ներկայացուցչություն) և հիմնարկի բանկային կամ առարկայազուրկ մետաղական հաշվի բացման փաստաթղթերի ցանկ

1. Հիմնադիր իրավաբանական անձի կանոնադրությունը՝ իր բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ.
2. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրամադրված պետական միասնական գրանցամատյանից քաղվածք.
3. Հիմնադիր իրավաբանական անձը բաժնետիրական ընկերություն լինելու դեպքում Հիմնադիր իրավաբանական անձի համար՝ նաև արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ կամ բաժնետերերի ռեեստրից քաղվածք՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպության կողմից.
4. Հիմնադիր իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշում(ներ)ն առանձնացված ստորաբաժանում (մասնաճյուղ, ներկայացուցչություն) կամ հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավար կամ նրա ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին տեղեկությունները.
5. Հիմնադիր իրավաբանական անձի կողմից առանձնացված ստորաբաժանման (մասնաճյուղ, ներկայացուցչություն) կամ հիմնարկի ղեկավարին կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարին տրված լիազորագիրը.
6. Առանձնացված ստորաբաժանման (մասնաճյուղի, ներկայացուցչության), հիմնարկի ղեկավարի կամ նրա ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի անձը հաստատող փաստաթուղթը.
7. Առանձնացված ստորաբաժանման (մասնաճյուղի, ներկայացուցչության) կամ հիմնարկի կանոնադրությունը.
8. Առանձնացված ստորաբաժանման (մասնաճյուղի, ներկայացուցչության), հիմնարկի համար ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրամադրված պետական միասնական գրանցամատյանից քաղվածք.
9. Հաշվի բացման դիմում-պայմանագիրը.
10. Ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (առկայության դեպքում) քարտը.
11. Ստորագրությունների նմուշում որպես 1-ին և 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

Ծանուցում.

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղ, ներկայացուցչություն) և հիմնարկի բոլոր փաստաթղթերի պատճենները ներկայացվում են «Իսկականի հետ ճիշտ է» նշումով, ստորագրված իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավարի կամ

նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից և հաստատված իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի կնիքով (Հաճախորդի ցանկությամբ), բացառությամբ իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից ներկայացված բնօրինակ լիազորագրերի:

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգով» սահմանված այլ փաստաթղթեր: